ԱՇՏԱՐԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-22/1/1

ք. Աշտարակ **«13» Դեկտեմբերի 2022թ.**

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Թ.Շահվերդյանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սարտամ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Տ. Սարգսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են __2__ օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **5486000 (հինգ միլիոն չորս հարյուր ութսունվեց հազար)ՀՀ դրամ:**Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման

հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների

համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[2][1]Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են

այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին: 8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան	**«Սարտամ» ՍՊԸ**
ՀՀ Արագածոտնի մարզ	**ՀՀ Արագածոտնի մարզ**
Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7	**ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ, Ն. Աշտարակեցու 9/1**
ՀՎՀՀ՝ 05028579	**ՀՎՀՀ 05016991**
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	**«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ**
Հ/Հ 900442101128	**Հ/Հ 220043330855000**
Համայնքի ղեկավար	**Տնօրեն՝**
_____ Թ.Շահվերդյան	**_____Տ.Սարգսյան**
(ստորագրություն)	**(ստորագրություն)**
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված N 1
« 13 » Դեկտեմբերի 2022թ. կնքված
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-22/1/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի								մատակարարման		
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ենթակա քանակը	ժամկետը***
1	**37521270/1**	**Խաղալիք փոխադրամիջոցներ (Էլեկտրական մեքենա մեծ)**	Համաձայն հավելված 1.1	Հատ	4200	1050000	250	Աշտարակ համայնք	250	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
2	**37521270/2**	**Խաղալիք փոխադրամիջոցներ (Էլեկտրական մեքենա)**	Համաձայն հավելված 1.1	Հատ	4000	80000	20	Աշտարակ համայնք	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
3	**37521280/1**	**Խաղալիք զենք (Ատրճանակ մեծ տուփով)**	Համաձայն հավելված 1.1	Հատ	2400	768000	320	Աշտարակ համայնք	320	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
4	**37511200/1**	**Տիկնիկների պարագաներ (Խոհանոց)**	Համաձայն հավելված 1.1	Հատ	1200	372000	310	Աշտարակ համայնք	310	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

5	37511200/2	Տիկնիկների պարագաներ (Տուփով տիկնիկ 2 հատ)	Համաձայն հավելված 1.1	Հատ	1300	390000	300	Աշտարակ համայնք	300	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
6	37511200/3	Տիկնիկների պարագաներ (Տուփով տիկնիկ 3 կերպար)	Համաձայն հավելված 1.1	Հատ	1600	16000	10	Աշտարակ համայնք	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
7	37511200/4	Տիկնիկների պարագաներ (Տուփով աղջկա արդուկ, սեղան)	Համաձայն հավելված 1.1	Հատ	2800	644000	230	Աշտարակ համայնք	230	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
8	37511200/5	Տիկնիկների պարագաներ (Տիկնիկ տուփով մեծ հավաքածու)	Համաձայն հավելված 1.1	Հատ	2800	280000	100	Աշտարակ համայնք	100	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
9	37511200/6	Տիկնիկների պարագաներ (Տիկնիկ տուփով մեծ վարսավիր)	Համաձայն հավելված 1.1	Հատ	4500	540000	120	Աշտարակ համայնք	120	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
10	37511200/7	Տիկնիկների պարագաներ (Տուփով աղջկա խոհանոց և Տիկնիկ)	Համաձայն հավելված 1.1	Հատ	4500	270000	60	Աշտարակ համայնք	60	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
11	37511200/8	Տիկնիկների պարագաներ (Տուփով աղջկա խոհանոց և Տիկնիկ LOL)	Համաձայն հավելված 1.1	Հատ	4600	230000	50	Աշտարակ համայնք	50	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
12	37511200/9	Տիկնիկների պարագաներ (Տուփով տիկնիկ Մեծ)	Համաձայն հավելված 1.1	Հատ	2600	104000	40	Աշտարակ համայնք	40	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:
13	37521110/1	Անիվներով խաղալիքներ (Էլեկտրական լուային ռոբոտ)	Համաձայն հավելված 1.1	Հատ	2600	390000	150	Աշտարակ համայնք	150	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

14	37521110/2	Անիվներով խաղալիքներ (Էլեկտրական սկեյթ Սպայդեր)	Համաձայն հավելված 1.1	Հատ	2200	352000	160	Աշտարակ համայնք	160	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ քան տվյալ տարվա դեկտեմբերի 28-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05028579
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101128
Համայնքի ղեկավար
_____ Թ.Շահվերդյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սարտամ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ, Ն. Աշտարակեցու 9/1
ՀՎՀՀ 05016991
«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220043330855000
Տնօրեն՝
_____Տ.Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1.1
« 13 » Դեկտեմբերի 2022թ. կնքված
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-22/1/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆԲՆՈՒԹԱԳԻՐ

N	Անվանում	Քանակ	Տեխ բնութագիր
1	**Խաղալիք փոխադրամիջոցներ (Էլեկտրական մեքենա մեծ)**	250	Հեռակառավարվող ավտոմեքենա, որն հարմար է ինչպես փակ, այնպես էլ բացօթյա խաղերի համար: Լիաքարշ ամենագնացի հիմնական առանձնահատկությունը մեծ նորարարական անիվներն են, որոնք թույլ են տալիս մեքենային շարժվել ցանկացած ուղղությամբ, այդ թվում՝ կողք՝ առանց թափքը շրջելու: Ավտոմեքենայի պատյանը պատրաստված է հարվածակայուն պլաստիկից, որը հիանալի պաշտպանում է ինչպես ներքին էլեկտրոնային բաղադրիչները, այնպես էլ պատյանը, երբ այն հանդիպում է խոչընդոտների: Չափերը ոչ պակաս 28*8*9սմ: Պտտումը ձախ, աջ և 360 աստիճանի պտույտը կատարվում է joystick հրամանների համակցությամբ: Ամբողջական հավաքածու՝ ավտոմեքենա, հեռակառավարման վահանակ, մարտկոց: Հավաքածուն դասավորված է ստվարաթղթե, թափանցիկ առաջնամասով արկղի մեջ: Մեքենայի տուփի չափը ոչ պակաս 30 x 11 x 15 սմ: Հեռակառավարման համար պահանջվում է 5 AA մարտկոց Գույնը..... Սև. Տարիքային խումբ.3+
2	**Խաղալիք փոխադրամիջոցներ (Էլեկտրական մեքենա)**	20	Տղա երեխաների համար նախատեսված, հեռակառավարվող ավտոմեքենա: Հզոր շարժիչը, զուգորդված թեթև թափքի հետ, ապահովում է ավտոմեքենայի շարժումը ցանկացած ուղղությամբ: Մեքենայի լուսարձակները փայլում են առաջ շարժվելիս: Պտտումը ձախ, աջ և 360 աստիճանի պտույտը կատարվում է joystick հրամանների համակցությամբ: Չափերը ոչ պակաս 18*8*9սմ: Ամբողջական հավաքածու՝ ավտոմեքենա, հեռակառավարման վահանակ, մարտկոց: Հեռակառավարման վահանակն աշխատում է AA-2 հատ մարտկոցներով, մեքենան AA-3 հատ մարտկոցներով: Հավաքածուն դասավորված է ստվարաթղթե, թափանցիկ առաջնամասով արկղի մեջ: Մեքենայի տուփի չափը ոչ պակաս 36 սմ x 11սմ x 15 սմ: Գույնը կարմիր, կապույտ Տարիքային խումբ 3+
3	**Խաղալիք զենք (Ատրճանակ մեծ տուփով)**	320	Լուսային և ձայնային խաղալիք զենքն օգտագործելիս միաժամանակ ակտիվանում է լուսային, ձայնային ինչպես նաև վիբրատոր համակարգը: Զենքը պլաստմասյա է, և տուփի մեջ առկա է կապիչ: Զենքը աշխատում է մարտկոցների միջոցով: Հավաքածուն պետք է դասավորված լինի ստվարաթղթե արկղով: Չափը ոչ պակաս 41 x5 x19 սմ-ից: Գույնը.սև ,կապույտ,նարնջագույն,ոսկեգույն Չափը ոչ պակաս 41 x5 x19 Տարիքային խումբ.....3+
4	**Տիկնիկների պարագաներ (Խոհանոց)**	310	Թեյի հավաքածուն բաղկացած է 13 պլաստմասե կտորից: Այն իր մեջ ներառում է 4 ափսե վարդագույն և մարմնագույն, 3 տեսակի թխվացքք ,երկու բաժակ ինչպես նաև գեղեցիկ վարդագույն թեյնիկ: Մեկ վարդագույն թեյի գդալ և խմորեղենների մատուցման բռնիչ: Այս հավաքածուն նախատեսված է 3+ տարիքային երեխաների համար: Հավաքածուն

			պետք է դասավորված լինի ստվարաթղթե արկղով և առաջնամասը լինի թափանցիկ: Տուփի չափը ոչ պակաս 31 x4 x21սմ-ից: Գույնը...սպիտակ, վարդագույն, մարմնագույն Տարիքային խումբ..3+
5	**Տիկնիկների պարագաներ (Տուփով տիկնիկ 2 հատ)**	300	Աղջիկների համար նախատեսված տիկնիկների հավաքածու՝ Էլզա և Աննա համանուն հերոսներով <<Սառցե սիրտը>> մուլտֆիլմից: Տիկնիկները շարժական են և ճկուն: Հավաքածուի մեջ ներառված տիկնիկների համար նախատեսված աքսեսուարներն ու հանդերձանքները խաղն ավելի հետաքրքիր կդարձնեն: Աղջիկների համար նախատեսված մանկական տիկնիկները որակյալ են, դեմքը լավ գծված, մազերը հեշտ է հյուսել, իսկ հագուստը հեշտ է հանել և փոխել մյուսը: Տիկնիկների հասակը ոչ պակաս 22սմ:Հավաքածուն դասավորված է ստվարաթղթե, թափանցիկ առաջնամասով արկղի մեջ: Տուփի չափը ոչ պակաս 15 սմ x 5 սմ x 20 սմ: Տիկնիկները լինեն իրենց կերպարին համահունչ հագուստով: Տարիքային խումբ3+
6	**Տիկնիկների պարագաներ (Տուփով տիկնիկ 3 կերպար)**	10	Տիկնիկ տուփով / 2հատ/ Հավաքածու՝<<Սառցե սիրտ>> մուլտֆիլմից: Հավաքածն բաղկացած է 3 կերպարներից: Էլզան և Աննան շպարված են ունեն ոսկեծամ վարսեր :Էլզան կրում է կապույտ զգեստ,իսկ Աննան կապույտ,սև և կանաչ զգեստ: Օլֆը ունի սպիտակ գույն,նարնջագույն քիթ և սև վարսեր: Տիկնիկների հասակը ոչ պակաս 28սմ : Օլֆը ոչ պակաս 7սմ :Հավաքածուն պետք է դասավորված լինի ստվարաթղթե արկղով և առաջնամասը լինի թափանցիկ: Տուփի չափը ոչ պակաս չափը ոչ պակաս 33 x5 x24սմ-ից: Տիկնիկները լինեն իրենց կերպարին համահունչ հագուստով: Տարիքային խումբ.....3+
7	**Տիկնիկների պարագաներ (Տուփով աղջկա արդուկ, սեղան)**	230	Տուփով աղջկա արդուկ, սեղան Մանկական հավաքածու փոքրիկ տանտիրուհիների համար՝ բաղկացած վարդագույն արդուկից, արդուկի սեղանից, երկու կախիչներից, զամբյուղից և կապույտ, սպիտակ, վարդագույն ամրակներից: Հավաքածուն երեխայի մոտ զարգացնում է ձեռքերի շարժիչ հմտությունները, շարժումների համակարգումը, ուշադրությունը, ճշգրտությունը և աշխատասիրությունը: Այն նախատեսված է դերային խաղերի համար, նպաստում է երևակայության զարգացմանը: Խաղալիք արդուկը միացնելիս հնչում են մեղեդային հնչյուններ և վառվում են լուսային էֆեկտներ: Արդուկի սեղանը կոմպակտ ծալվում է: Հավաքածուն պատրաստված է բարձրորակ նյութերից: Արդուկի աշխատանքի համար պահանջվում են 2 AA մարտկոցներ: Հավաքածուն դասավորված է ստվարաթղթե, թափանցիկ առաջնամասով արկղի մեջ: Տուփի չափը ոչ պակաս 37 սմ x 8 սմ x 25 սմ: Գույնը..վարդագույն Տարիքային խումբ 3+
8	**Տիկնիկների պարագաներ (Տիկնիկ տուփով մեծ հավաքածու)**	100	Տիկնիկ տուփով մեծ հավաքածու Հավաքածուն իր մեջ պարունակում է մեծ հասակը 27սմ և փոքր հասակը 10սմ տիկնիկներ,զգեստապահարան,որում առկա է 11 հագուստ, գունավոր գոտի մեջտեղում վարդ, 2 զույգ կոշիկ,արծաթագույն ժամանակակից զարդ, պլաստմասե շիշ որը նախատեսված է փոքրիկ արքայադստրիկի համար,ճոճաթոռ վարդագույն և կապույտ, ինչպես նաև 1 դեղին և վարդագույն պլաստմասե կլոր սեղան և 4 դեղին աթոռներ: Հավաքածուն պետք է դասավորված լինի ստվարաթղթե արկղով և առաջնամասը լինի թափանցիկ: Տուփի չափը ոչ պակաս 42 x5 x33սմ-ից:

			Հագուստները՝տարբերգույների Տարիքային խումբ.....3+
9	**Տիկնիկների պարագաներ (Տիկնիկ տուփով մեծ վարսավիր)**	120	Տիկնիկ տուփով մեծ վարսավիր Հավաքածուն բաղկացած է երկար վարսերով տիկնիկ մանեկենից ,որն ամրացվում է պլաստմասե պարանոցի վրա, սանր,մկրատ,2 տեսակի մազակալ ատամներով, մեկ երկար մազակալ վրան ամրացված սիրտ,մեկ տուփ մազակալ,որի մեջ դրված է 5 փոքրիկ ռեզինե մազակալ,3 գույնզգուն մազակալ սեղմակով: Հավաքածուն պետք է դասավորված լինի ստվարաթղթե արկղով և առաջնամասը լինի թափանցիկ: Տուփի չափսը ոչ պակաս 42,5 x10,5 x25,5 սմ-ից: Գույնը.վարդագույն,դեղին,կապույտ, մարմնագույն Տարիքային խումբ.....3+
10	**Տիկնիկների պարագաներ (Տուփով աղջկա խոհանոց և Տիկնիկ)**	60	Տուփով աղջկա խոհանոց և Տիկնիկ Մանկական խոհանոցային հավաքածու Էլզա տիկնիկով <<Սառցե սիրտը>> մուլտֆիլմից: Տիկնիկը շարժական է, ճկուն, որակյալ, դեմքը լավ գծված, մազերը ոսկեծամ: Խոհանոցային հավաքածուն ներառում է վառարան, լվացարան ծորակով, միկրոալիքային վառարան, օդակլանիչ համակարգ, սառնարան, սննդի դարակներ, ջրի ծորակ, աքսեսուարներ՝ (դանակ, շերեփ, խառնիչ): Վառարանի բռնակները պտտվում են, օդակլանիչ համակարգը և միկրոալիքային վառարանը լուսային ու ձայնային էֆեկտներով են: Բոլոր պահարաններն ու դարակները բացվում և փակվում են: Հավաքածուն աշխատում է 3 AA մարտկոցով: Մանկական խոհանոցը պատրաստված է որակյալ և անվտանգ պլաստիկից: Հավաքածուն դասավորված է ստվարաթղթե, թափանցիկ առաջնամասով արկղի մեջ: Տուփի չափսը ոչ պակաս 39 սմ x 9 սմ x 31 սմ: Գույնը. կապույտ, երկնագույն, սպիտակ Տարիքային խումբ.....3+
11	**Տիկնիկների պարագաներ (Տուփով աղջկա խոհանոց և Տիկնիկ LOL)**	50	Տուփով աղջկա խոհանոց LOL <<LOL >>անակնկալում ներառված է խոհանոցային տեխնիկա և կահույք: Միկրոալիքային վառարան վարդագույն և սպտակ, գազօջախ վարդագույն որին հարմարեցված է օաղքարշ,վարագույն սպասք լվանալու մեքենա սպիտակ բռնակով,տոստեր որում առկա է 2 կտոր հաց, ինչպես նաև 4 կարմիր բաժակ,1 թեյի բաժակ,1 տուփ կաթ,մեկ վարդագուն թավա,1 վարդագույն կաթսա և 2 խոհանոցային պահարան : Հավաքածուն պետք է դասավորված լինի ստվարաթղթե արկղով և առաջնամասը լինի թափանցիկ: Չափսը ոչ պակաս 34,5 x8,5 x26,5 սմ-ից: Հավաքածուի գույնը վարդագույն,սպիտակ: Տարիքային խումբ.....3+
12	**Տիկնիկների պարագաներ (Տուփով տիկնիկ Մեծ)**	40	Տիկնիկ տուփով մեծ Տիկնիկ՝ ոսկեծամ մազերով և 55 սմ հասակով: Տիկնիկը շպարված է և կրում է վարդագույն ու սպիտակ շքեղ զգեստ:Զգեստն ունի դեկոլտե բացվածք և կարմիր գոտի ,որի վրա ամրացված է արծաթագույն գեղեցիկ սիրտ: Հավաքածուն պետք է դասավորված լինի ստվարաթղթե արկղով և առաջնամասը լինի թափանցիկ: Չափսը ոչ պակաս չափսը ոչ պակաս 60 x8 x17սմ-ից: Արտաքին տեսքը վարագույն,սպիտակ,կարմիր,արծաթագույնի համադրությամբ : Տարիքային խումբ.....3+

13	**Անիվներով խաղալիքներ (Էլեկտրական լուային ռոբոտ)**	150	Էլեկտրական լուային ռոբոտ Խաղալիք ռոբոտ, որը քայլում է տարբեր ուղղություններով, լույսերը փայլում են աչքերում, ականջների և որովայնի հատվածում, գործում է դեմո ռեժիմ՝ պարում և երգեր է երգում: Աշխատանքի համար պահանջվում են AA մարտկոցներ՝ 3 հատ: Տուփի չափսը ոչ պակաս 31.5 սմ x 13 սմ x 36.5 սմ: Պատրաստված է պլաստմասից և անվտանգ նյութերից: Գույնը. սպիտակ, կանաչ Տարիքային խումբ 3+
14	**Անիվներով խաղալիքներ (Էլեկտրական սկեյթ Սպայդեր)**	160	Էլեկտրական սկեյթ Սպայդեր SPIDERMAN սկուտեր սկեյթբորդ խաղալիք՝ որն ունի 360 աստիճան պտտվող ունիվերսալ անիվներ, պատրաստված է էկոլոգիապես մաքուր ABS նյութերից: Տուփի չափսը ոչ պակաս 15 սմ x 10 սմ x 22.5 սմ: Միացնելով խաղալիքը հնչում են մեղեդային հնչյուններ և վառվում են լուսային էֆեկտներ: Ֆիգուրը՝ փաթեթավորված թեմատիկ տուփի մեջ ոչ պակաս (10x5.1x31 սմ) կարմիր և կապույտ գույների համադրությամբ, ունի լավ մշակված դիզայն, որը կրկնում է ֆիլմի և մուլտհերոսի տեսքը և հագեցած է հոդակապման բազմաթիվ կետերով: Գույնը կարմիր, կապույտ Տարիքային խումբ 3

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05028579
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101128
Համայնքի ղեկավար

---------- Թ.Շահվերդյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սարտամ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ, Ն. Աշտարակեցու 9/1
ՀՎՀՀ 05016991
Բանկը՝ «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 2200433308550000
Տնօրեն՝

----------Տ.Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 13 » Դեկտեմբերի 2022թ. կնքված
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-22/1/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	37521270/1	Խաղալիք փոխադրամիջոցներ (Էլեկտրական մեքենա մեծ)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1050000	1050000
2	37521270/2	Խաղալիք փոխադրամիջոցներ (Էլեկտրական մեքենա)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	80000	80000
3	37521280/1	Խաղալիք զենք (Ատրճանակ մեծ տուփով)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	768000	768000
4	37511200/1	Տիկնիկների պարագաներ (Խոհանոց)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	372000	372000
5	37511200/2	Տիկնիկների պարագաներ (Տուփով տիկնիկ 2 հատ)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	390000	390000
6	37511200/3	Տիկնիկների պարագաներ (Տուփով տիկնիկ 3 կերպար)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	16000	16000
7	37511200/4	Տիկնիկների պարագաներ (Տուփով աղջկա արդուկ, սեղան)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	644000	644000
8	37511200/5	Տիկնիկների պարագաներ (Տիկնիկ տուփով մեծ հավաքածու)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	280000	280000

9	37511200/6	Տիկնիկների պարագաներ (Տիկնիկ տուփով մեծ վարսավիր)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	540000	540000
10	37511200/7	Տիկնիկների պարագաներ (Տուփով աղջկա խոհանոց և Տիկնիկ)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	270000	270000
11	37511200/8	Տիկնիկների պարագաներ (Տուփով աղջկա խոհանոց և Տիկնիկ LOL)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	230000	230000
12	37511200/9	Տիկնիկների պարագաներ (Տուփով տիկնիկ Մեծ)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	104000	104000
13	37521110/1	Անիվներով խաղալիքներ (Էլեկտրական լուային ռոբոտ)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	390000	390000
14	37521110/2	Անիվներով խաղալիքներ (Էլեկտրական սկեյթ Սպայդեր)	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	352000	352000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարան
ՀՀ Արագածոտնի մարզ Ք.Աշտարակ,Ն.Աշտարակեցու հրապարակ 7
ՀՎՀՀ՝ 05028579
ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900442101128
Համայնքի ղեկավար

_____ Թ.Շահվերդյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Սարտամ» ՍՊԸ
ՀՀ Արագածոտնի մարզ
ՀՀ Արագածոտնի մարզ ք.Աշտարակ,
Ն. Աշտարակեցու 9/1
ՀՎՀՀ 05016991
«ԱԿԲԱ-ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220043330855000
Տնօրեն

_____Տ.Սարգսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
« » Դեկտեմբերի 2022թ. կնքված
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-22/1/1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » Դեկտեմբերի 2022թ. կնքված
N ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՊՁԲ-22/1/1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն